

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### Քաղաքացիայի գլխավոր վարչության 2016 թ. գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների իրականացման արդյունքների մասին

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գերակա խնդիրների լուծման նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության արձևաչափի քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունն իրականացրել է հետևյալ աշխատանքները.

Հիմք ընդունելով քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ-ի) A37-11 բանաձևով ընդունված պահանջները և աերոդրոմի շրջանում իրականացվող թռիչքների նավիգացիոն շեղումները նվազեցնելու անհարժեշտությունը՝ «Շիրակ» աերոդրոմում ներդրել է ԻԿԱՕ-ի բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի կոնցեպցիան, արդիականացվել են «Զվարթնոց» աերոդրոմի ԻԿԱՕ-ի բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի կոնցեպցիայի վայրէջքային սխեմաները և թարմացմամբ է ՀՀ օդային տարածքում Շրջանային նավիգացիան (ԱՐՆԱՎ/RNAV):

Կատարված աշխատանքների արդյունքում 2016 թվականի ապրիլ ամսին Հայաստանի Հանրապետությունում ամբողջությամբ ներդրվել է ԻԿԱՕ-ի բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) կոնցեպցիան: Արդյունքում՝ Հայաստանի Հանրապետությունը հանդիսացել է ԻԿԱՕ-ի անդամ առաջին պետություններից, որն ամբողջովին համապատասխանում է A37-11 բանաձևով ընդունված պահանջներին:

Բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) կոնցեպցիան պարունակում է մի շարք առավելություններ, որոնք թույլ են տալիս՝

- կոմերցիոն տեսանկյունից ավելացնել թռիչքների արդյունավետությունը՝ նվազեցնելով ճանապարհի երկարությունը երթուղով և մոտեցման ընթացքում,
- բարձրացնել արտադրողականությունը՝ նվազեցնելով տարածական բաժանման հետազդերը,
- բարձրացնել անվտանգության մակարդակը նավիգացիոն ճշգրտության բարձրացմամբ,
- օդանավակայաններում կատարելագործել ժամանման սխեմաները՝ բոլոր եղանակային պայմաններում, և պահպանել խոչընդոտների անցման կարևորագույն բարձրությունների պահանջները՝ օդանավի թռիչքի օպտիմիզացված ուղիների միջոցով,
- ուշացումների նվազեցում օդային տարածքում և օդանավակայաններում՝ ներդնելով հանգուցային շրջաններում լրացուցիչ զուգահեռ երթուղիներ և լրացուցիչ մեկնման ու ժամանման կետեր,
- կարգավարական և թռիչքային անձնակազմերի աշխատանքային ծանրաբեռնվածության նվազեցում, քանի որ շրջանային նավիգացիայի ժամանակ օդանավն իրականացնում է թռիչք նախատեսված հետազդով առանց կարգավարի միջամտության:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գերակա խնդիրների լուծման նպատակով՝ աշխատանքներ են իրականացվել նաև ավիացիոն անվտանգության ոլորտում:

2016 թվականի ապրիլ ամսին Եվրոպական Քաղաքացիական ավիացիայի կոնֆերանս /ԵԿԱԿ/ կազմակերպության կողմից Եվրոմիության «Ազգային աուդիտ և զարգացման ծրագրի» շրջանակներում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի համակարգում անցկացվել է քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ոլորտի փաստաթղթային աուդիտ, որի արդյունքում ԵԿԱԿ աուդիտի խմբի կողմից առաջարկվել է ԵԿԱԿ Դոկ.30 փաստաթղթի նոր՝ 13-րդ խմբագրության պահանջների համապատասխանության ապահովման նպատակով մշակել և ընդունել քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության որակի հսկողության ազգային ծրագիր:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության որակի հսկողության ծրագրի» ընդունմամբ կկանոնակարգվեն ՀՀ օդանավակայաններում իրականացվող ավիացիոն անվտանգության աշխատանքների որակի հսկողության միջոցառումները, կսահմանվեն ընթացակարգեր կապված ՀՀ օդանավակայաններում իրականացվող ավիացիոն անվտանգության ապահովման աշխատանքների որակի նկատմամբ քաղաքացիական ավիացիայի բնագավառի լիազոր մարմնի կողմից իրականացվող հսկողության տեսակների և միջոցառումների, հսկողության միջոցառումների իրականացման կարգի, ժամկետների, հսկողության ընթացքում բացահայտված անհամապատասխանությունների և թերությունների վերացման հետ կապված:

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ**  
**ԱՎԻԱՑԻԱՑԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**  
**ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**  
**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունն (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) իր գործունեությունն իրականացնում է տարեկան աշխատանքային ծրագրի համաձայն՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի, Կառավարության, Վարչապետի որոշումներով, կարգադրություններով, հանձնարարականներով և հրահանգներով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ**  
**ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. Հիմք ընդունելով 2010 թվականին կայացած քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ-ի) 37-րդ ասամբլեայի A37-11 բանաձևով ընդունված պահանջը և շարունակական արդիականացումը՝ բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) կոնցեպցիայի ներդրման վերաբերյալ, ինչպես նաև աերոդրոմի շրջանում իրականացվող թռիչքների նավիգացիոն շեղումները նվազեցնելու նպատակով անհրաժեշտություն էր առաջացել՝

- «Շիրակ» աերոդրոմում ԻԿԱՕ-ի բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) կոնցեպցիայի ներդրման:
- «Զվարթնոց» աերոդրոմի ԻԿԱՕ-ի բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) կոնցեպցիայի վայրէջքային սխեմաների արդիականացման:
- ՀՀ օդային տարածքում Շրջանային նավիգացիայի (ԱՐՆԱՎ/RNAV) թարմացման:

2. ԻԿԱՕ-ի բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) կոնցեպցիայի ներդրումը «Շիրակ» աերոդրոմում, «Զվարթնոց» աերոդրոմի ԻԿԱՕ-ի բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) կոնցեպցիայի վայրէջքային սխեմաների արդիականացումը և ՀՀ օդային տարածքում Շրջանային նավիգացիայի (ԱՐՆԱՎ/RNAV) թարմացումը նպատակաուղղված է թռիչքների անվտանգության մակարդակի բարձրացմանը:

3. Բնութագրերի վրա հիմնված նավիզացիայի (PBN) կոնցեպցիան պարունակում է մի շարք առավելություններ, որոնք թույլ են տալիս՝

- կոմերցիոն տեսանկյունից ավելացնել թռիչքների արդյունավետությունը՝ նվազեցնելով ճանապարհի երկարությունը երթուղով և մոտեցման ընթացքում.
- բարձրացնել արտադրողականությունը՝ նվազեցնելով տարածական բաժանման հետագծերը.
- բարձրացնել անվտանգության մակարդակը նավիզացիոն ճշգրտության բարձրացմամբ.
- կատարելագործել ժամանման սխեմաները օդանավակայաններում բոլոր եղանակային պայմաններում և պահպանել խոչընդոտների անցման կարևորագույն բարձրությունների պահանջները օդանավի թռիչքի օպտիմիզացված ուղիների միջոցով.
- ուշացումների նվազեցում օդային տարածքում և օդանավակայաններում ներդնելով հանգույցային շրջաններում լրացուցիչ զուգահեռ երթուղիներ և լրացուցիչ մեկնման ու ժամանման կետեր.
- կարգավարական և թռիչքային անձնակազմերի աշխատանքային ծանրաբեռնվածության նվազեցում, քանի որ շրջանային նավիզացիայի ժամանակ օդանավը իրականացնում է թռիչք նախատեսված հետագծով առանց կարգավարի միջամտության.
- վերացնում է անհրաժեշտությունը նոր ժամանման, մեկնման, մոտեցման ընթացակարգերի մշակման, երբ տեղադրվում են նոր նավիզացիոն համակարգեր, որը կապված է էական ծախսերի հետ.
- նշված կոնցեպցիայի ներդրումը ուղղված է ՀՀ ԿԱ ՔԱԳՎ համակարգի «Հայաէրոնավիզացիա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական գործառույթների իրականացման որակի բարձրացմանը և թռիչքների անվտանգության մակարդակի բարելավմանը, որը բխում է ԻԿԱՕ-ի համապատասխան բնութագրերի վրա հիմնված կոնցեպցիայի ներդրմանը Հայաստանի Հանրապետության տարածքում: Այդ աշխատանքները իրականացվել են «Հայաէրոնավիզացիա» փակ բաժնետիրական ընկերության հաշվին և ՀՀ պետական բյուջեից որևէ լրացուցիչ ծախսեր չեն պահանջվել:

4. ԻԿԱՕ-ի բնութագրերի վրա հիմնված նավիզացիայի (PBN) կոնցեպցիայի ներդրման «Շիրակ» ատերոդրոմում, «Զվարթնոց» ատերոդրոմի ԻԿԱՕ-ի բնութագրերի վրա հիմնված նավիզացիայի (PBN) կոնցեպցիայի վայրէջքային սխեմաների արդիականացման և ՀՀ օդային տարածքում Շրջանային նավիզացիայի (ԱՐՆԱՎ/RNAV) թարմացման արդյունքում Հայաստանի Հանրապետությունը հանդիսացել է ԻԿԱՕ-ի անդամ առաջին

պետություններից, որն ամբողջովին համապատասխանում է 37-րդ ասամբլեայի A37-11 բանաձևով ընդունված պահանջներին:

5. Կատարված աշխատանքների արդյունքում 2016 թվականի ապրիլ ամսին Հայաստանի Հանրապետությունում ամբողջությամբ ներդրվել է ԻԿԱՕ-ի բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) կոնցեպցիան՝

- Մշակվել են ԻԿԱՕ-ի բնութագրերի վրա հիմնված Գյումրու «Շիրակ» օդանավակայանի PBN-ի 02/20 վազքուղու ժամանման, մեկնման (RNAV1 SID/STAR) ստանդարտ երթուղիների, վայրէջքի RNAV (GNSS) APCH+Baro VNAV (RNP 0,3) և Զվարթնոց օդանավակայանի 27 վազքուղու RNAV (GNSS) APCH+LNAV (RNP 0,3) նոր սխեմաները:

- Սահմանված կարգի համաձայն «Հայաէրոնավիգացիա» ՓԲ ընկերության կողմից իրականացվել է սխեմաների ներդրման անվտանգության և ռիսկերի գնահատում: RNAV (GNSS) սխեմաների ներդրման ապահովման տեղեկատվությունը և անվտանգության գնահատման փաթեթը համաձայնեցման նպատակով ներկայացվել է Գլխավոր վարչություն:

- Բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) թռիչքային սխեմաների նախագծերը քննարկվել են ՀՀ պաշտպանության նախարարության ավիացիայի վարչության հետ:

- Համաձայն Գլխավոր վարչության 2016 թվականի փետրվարի 16-ի N32-Ս և ՀՀ պաշտպանության նախարարության 2016 թվականի փետրվարի 23-ի N2-Ս համատեղ հրամանի հաստատվել են ԻԿԱՕ-ի բնութագրերի վրա հիմնված Գյումրու «Շիրակ» օդանավակայանի նավիգացիայի (PBN)-ի 02/20 վազքուղու ժամանման, մեկնման (RNAV1 SID/STAR) ստանդարտ երթուղիների, վայրէջքի RNAV (GNSS) APCH+Baro VNAV (RNP 0,3) և Զվարթնոց օդանավակայանի 27 վազքուղու վայրէջքի RNAV (GNSS) APCH+LNAV (RNP 0,3) նոր սխեմաները:

6. Նշված փոփոխությունները սահմանված կարգի համաձայն 2016 թվականի մարտի 31-ին հրապարակվել են ՀՀ Աերոնավիգացիոն տեղեկատվական ժողովածուի մեջ, որոնք ուժի մեջ են մտել 2016 թվականի մայիսի 26-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ**

**ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N131-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 29-րդ կետի՝ Գլխավոր վարչությունում մշակվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության որակի հսկողության ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը և դրվել շրջանառության մեջ:

2016 թվականի ապրիլի 18-ից 22-ը Եվրոպական Քաղաքացիական ավիացիայի կոնֆերանս /ԵԿԱԿ/ կազմակերպության կողմից Եվրոմիության «Ազգային աուդիտ և զարգացման ծրագիր»-ի շրջանակներում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի համակարգում անցկացվել է քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ոլորտի փաստաթղթային աուդիտ, որի արդյունքում ԵԿԱԿ աուդիտի խմբի կողմից առաջարկվել է ԵԿԱԿ Դոկ.30 փաստաթղթի նոր՝ 13-րդ խմբագրության (ընդունվել է 2016թ. փետրվարի 12-ին) պահանջների համապատասխանության ապահովման նպատակով մշակել և ընդունել քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության որակի հսկողության ազգային ծրագիր:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության որակի հսկողության ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի լրամշակման հիմք է հանդիսացել նաև 2016 թվականի սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 7-ը տեղի ունեցած Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) 39-րդ Ասամբլեայի զագաթաժողովում ընդունված ԻԿԱՕ-ի թիվ 17 «Անվտանգություն» հավելվածը փոփոխություններով, որով սահմանվել են նոր չափորոշիչներ քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության աշխատանքների որակի հսկողության մասով:

Ելնելով վերը նշված փաստաթղթերում կատարված փոփոխություններից՝ անհրաժեշտություն է առաջացել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության որակի հսկողության ծրագիրը հաստատելու

մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը լրամշակել և համապատասխանեցնել ԻԿԱՕ և ԵԿԱԿ նոր չափորոշիչներին:

Գլխավոր վարչության կողմից մշակվել և Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանն է ներկայացվել՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 14-ի N 131-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որը ընդունվեց 13.10.2016թ. N 1043-Ն որոշմամբ, որով «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության որակի հսկողության ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացնելու ժամկետը երկարաձգվել է սեպտեմբերի 3-րդ տասնօրյակից դեկտեմբերի 2-րդ տասնօրյակը:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության որակի հսկողության ազգային ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը լրամշակվել և սահմանված ժամկետում կրկին ներկայացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը:

Ներկայումս «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության որակի հսկողության ազգային ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի 09.01.2017թ. թիվ 02/23.14/49-17 հանձնարարականի՝ ևս մեկ անգամ պետք է քննարկել չհամաձայնեցված կետերի մասով, անհրաժեշտության դեպքում լրամշակել, ամփոփել և ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ:

Անհրաժեշտ է նշել, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության որակի հսկողության ծրագրի» ընդունմամբ կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում իրականացվող ավիացիոն անվտանգության աշխատանքների որակի հսկողության միջոցառումները, սահմանվում են ընթացակարգեր կապված Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում իրականացվող ավիացիոն անվտանգության ապահովման աշխատանքների որակի նկատմամբ քաղաքացիական ավիացիայի բնագավառի լիազոր մարմնի կողմից իրականացվող հսկողության տեսակների և միջոցառումների, հսկողություն իրականացնող

աշխատակիցների իրավունքների և պարտականությունների, հսկողության միջոցառումների իրականացման կարգի, ժամկետների, հսկողության ընթացքում բացահայտված անհամապատասխանությունների և թերությունների վերացման հետ կապված, որոնք կհամապատասխանեցվեն Եվրոմիության «Անվտանգության կանոնակարգեր» Դոկ.30 փաստաթղթով և ԻԿԱՕ-ի թիվ 17 «Անվտանգություն» հավելվածով սահմանված չափորոշիչներին:



**ՏԵՂԵԿԱՆՔ**  
**2016 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ**  
**ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները	Գերակա խնդիրների կատարմանն ուղղված քայլերը
1	2	3	4
<p>Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն</p>	<p>18.</p>	<p>Հայաստանի Հանրապետության օդային տարածքում և օդանավակայաններում Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) կոնցեպցիայի ներդրում:</p>	<p>Գերակա խնդրի լուծմանն նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքներ՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Մշակվել է ԻԿԱՕ-ի բնութագրերի վրա հիմնված Գյումրի &lt;&lt;Շիրակ&gt;&gt; օդանավակայանի PBN-ի 02/20 վազքուղու ժամանման, մեկնման (RNAV1 SID/STAR) ստանդարտ երթուղիների, վայրէջքի RNAV (GNSS) APCH+Baro VNAV (RNP 0,3) և Զվարթնոց օդանավակայանի 27 վազքուղու RNAV (GNSS) APCH+LNAV (RNP 0,3) նոր սխեմաները:</li> <li>2. Իրականացվել է սխեմաների ներդրման անվտանգության և ռիսկերի գնահատում: RNAV (GNSS) սխեմաների ներդրման ապահովման տեղեկատվությունը և անվտանգության գնահատման փաթեթը հաստատվել է Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից:</li> <li>3. Բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) թռիչքային սխեմաների նախագծերը քննարկվել են ՀՀ պաշտպանության նախարարության ավիացիայի վարչության հետ:</li> <li>4. ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության 2016 թվականի փետրվարի 16-ի N32-Ա և ՀՀ պաշտպանության նախարարության 2016 թվականի փետրվարի 23-ի N2-Ա համատեղ հրամանով հաստատվել են ԻԿԱՕ-ի բնութագրերի վրա հիմնված Գյումրի &lt;&lt;Շիրակ&gt;&gt; օդանավակայանի նավիգացիայի (PBN)-ի 02/20 վազքուղու ժամանման, մեկնման (RNAV1 SID/STAR) ստանդարտ երթուղիների, վայրէջքի RNAV (GNSS) APCH+Baro VNAV (RNP 0,3) և Զվարթնոց օդանավակայանի 27 վազքուղու վայրէջքի RNAV (GNSS) APCH+LNAV (RNP 0,3) նոր սխեմաները:</li> <li>5. 2016 թվականի մարտի 31-ին հրապարակվել է ՀՀ Աերոնավիգացիոն տեղեկատվական ժողովածուի (AIP) մեջ, որը ուժի մեջ է մտել 2016 թվականի մայիսի 26-ին:</li> </ol>

**ՏԵՂԵԿԱՆՔ**  
**ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**  
**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների կատարման արդյունքները
Հայաստանի Հանրապետության կառավարության և առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն	29	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության որակի հսկողության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Համաձայն ՀՀ վարչապետի 09.01.2017թ. թիվ 02/23.14/49-17 հանձնարարականի՝ նախագիծը ևս մեկ անգամ պետք է քննարկել չհամաձայնեցված կետերի մասով, անհրաժեշտության դեպքում լրամշակել, ամփոփել և ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ: